Social Security

Medicare

www.socialsecurity.gov

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- Դիմել նպաստների
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն
- Ստանալ կարեւոր տեղեկություններ՝ ինչպէս ձեր *Սոցիալական Ապահովության Հաշուեցոյցը* (*Social Security Statement*) կամ փոխարինել ձեր «Medicare» քարտը, իսկ
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները

Այս ծառայությունների մի մասը միայն Անգլերէն լեզվով են: Հայերէն հրատարակությունները տեսնելու համար այցելեցէք մեր Բազմալեզուական Կեդրոնի էջը ***www.socialsecurity.gov/multilanguage*** եւ ընտրեցէք, Հայերէնե:

Զանգահարեք Մեր 1-800 Թվին

Մեր վեբ կայքը օգտագործելուց բացի դուք կարող եք անվճար զանգահարել՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մեր կողմից բոլոր հեռախոսազանգերը պահվում են գաղտնի: Մենք կարող ենք պատասխանել որոշակի հարցերի ժամը 7-ից մինչեւ 19-ը՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ: Մենք կարող ենք ապահովել թարգմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Մենք նաեւ տրամադրում ենք տեղեկատվություն տեղեկատվության ավտոմատացված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով: (Օգտվելով մեր ավտոմատ պատասխանիչ համակարգից, դուք կարող եք հայտնել մեզ ձեր նոր հասցեն կամ խնդրել Medicare-ի փոխարինող քարտ:) Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա կարող եք զանգահարել մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778**:

Մենք ուզում ենք նաեւ երաշխավորել, որպեսզի դուք ստանաք ճշգրիտ եւ քաղաքավարի սպասարկում: Այդ պատճառով որոշակի հեռախոսազանգեր հսկվում են Սոցիալական ապահովության երկրորդ ներկայացուցչի կողմից:

Մեջը ինչ է պարունակում

Medicare 4

Ի՞նչ է Medicare՝ 4

Ով կարող է Medicare ստանալ 6

Օգնություն ցած եկամուտ ունեցող մարդկանց համար 9

Medicare համար արձանագրվ իլը 11

Առողջապահական ծառայություններ ստանալու ընտրություն 15

Եթե դուք ունեք առողջության ուրիշ ապահովագրություն 15

Medicare

Սույն գրքույկը տալիս է հիմնական տեղեկություն Medicare մասին, բացատրում է թե ով կարող է արձանագրվ իլ նրա ծրագրի եւ ցուցակարգում է ձեր ունեցած տարբեր ընտրությունները:

Medicare	**Կայքը՝ www.medicare.gov** **Անվճար համար՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227)** **TTY համար՝ 1-877-486-2048**

Ի՞նչ է Medicare՝

Medicare մեր երկրի հիմնական բժշկական ապահովագրության ծրագիրն է 65 տարեկան եւ ավելի տարեց անձերի համար: Որոշ մարդիկ, որոնք 65-տարեկանից երիտասարդ են նույնպես կարող են իրավասու լինել Medicare ստանալու համար, ներառյալ հաշմանդամներ եւ նրանք որոնք տառապում են երկարատեվ երիկամային ձախողութենեէ կամ երկրորդական ամիոտրոֆիկ սկլերոզ հիվ անդութենեէ (Լու Գեհրիգի հիվանդություն): Medicare ծրագիրը օգնում է վ ճարելու առողջապահական ապասարկման հետ կապված ծախսերը, սակայն այն չի փակում բժշկական բոլոր ծախսերը կամ հիմնական երկարաժամկետ խնամքի հետ կապված բոլոր ծախսերը:

Medicare հայթայթվ ում է աշխատողների եւ նրանց գործատուների կողմից վճարվող հարկերի մասնաբաժինով: Այն մասնակի վճարվում է նաեւ ամսական շահաբաժինով, որոնք հանվում են Սոցիալական Ապահովության վճարումներից:

Medicare եւ Մէտիքէյտի Ծառայությունների Կեդրոնը կառավ արում է Medicare ծրագիրը: Սակայն, դուք Medicare համար դիմում եք Սոցիալական Ապահովության Վարչության մոտ եւ մենք կարող ենք տրամադրել ձեզ ընդհանուր տեղեկություն Medicare ծրագրի մասին:

Medicare կազմված է չորս մասերից

- Հիվանդանոցի ապահովագրություն (Մաս A), որն օգնում է վճարելու հիվանդանոցի մեջ ստացվ ած խնամքի կամ մասնագիտացված բուժարանում (հիվանդանոցեն դուրս

գալուց) ստացվ ած խնամքի, որոշակի տնային խնամքի եւ հանգստյան տան (hospice care) խնամքի ծախսերը .

- Բժշկական ապահովագրություն (Մաս B), որն օգնում է վճարելու բժիշկների ծառայությունների, հիվանդանոցից դուրս ստացվ ած խնամքի, բժշկական այլ ծառայությունների եւ բժշկական պաշարների ծախսերը, որոնք ընդգրկված չեն հիվանդանոցիապահովագրությամբ:
- Medicare առավելության ծրագիրներ (Մաս C) գտնվ ում է որոշ շրջաններում: Անհատներ որոնք ունեն Մաս A եւ Մաս B կարող են ստանալ իրենց բժշկական լրիվ ծառայությունները Մաս C ընդունող բժշկական կազմակերպություններից:
- Medicare դեղագիրով դեղորայք գնելու ծրագիր (Մաս D), որն օգնում է վ ճարելու դեղագիրով գնվ ելիք դեղորայքի ծախսերուն:

Medicare ծրագրի մասին հավ ելյալ տեղեկություն ստանալու համար կարդացեք *Medicare եւ Դուք* (*Medicare & You*) հրատարակությունը (հրատարակության թիվ CMS-10050): Օրինակ մը ստանալու համար զանգահարե՛ք Medicare անվճար համարով՝ **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**) կամ այցելե՛ք ***www.medicare.gov*** կայքը: Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա դուք կարող եք զանգահարել TTYի հատուկ թվ ին **1-877-486-2048**:

Երկու խոսք Մէտիքէյտի մասին

Դուք կարող եք մտածել, որ Medicare եւ Մէտիքէյտը նույնն են: Սակայն դրանք երկու տարբեր ծրագիրներ են: Մէտիքէյտը պետականառողջապահական ծրագիր մըն է, որը տրամադրում է հիվանդանոցի եւ բժշկական վճարման ապահովում ցած եկամուտով մարդկանց համար կամ այն մարդկանց համար, որոնք ունեն քիչ դրամական միջոցներ կամ ոչինչ: Յուրաքանչյուր նահանգ ունի իր սեփական կանոնները Մէտիքէյտի նկատմամբ: Որոշ մարդիկ բավ արարում են Medicare եւ Մէտիքէյտի պահանջներին: Մէտիքէյտի ծրագրի մասին լրացուցիչ տեղեկության համար դիմե՛ք ձեր տեղական բժշկական օգնության գործակալության, սոցիալական ծառայությունների կամ բարեկեցության գրասենյակին:

Հիվանդանոցի ապահովագրություն (Մաս A)

Միացյալ Նահանգների քաղաքացիներ կամ մշտական բնակիչներ որոնք 65-տարեկան եւ ավելի տարեց են, իրավասու են ստանալու Medicare անվճար ապահովագրություն (Մաս A): Վաթսունհինգ տարեկանում դուք իրավասու եք, եթե.

- Դուք ստանում եք կամ իրավասու եք ստանալու Սոցիալական Ապահովության նպաստներ կամ
- Դուք ստանում եք կամ իրավասու եք ստանալու երկաթուղու աշխատողների տարիքային նպաստներ կամ
- Դուք կամ ձեր ամուսինը (կինը) (կենդանի կամ մահացած, ներառյալ ամուսնալուծված ամուսինները (կանայք)) բավականաչափ երկար աշխատել եք կառավարական համակարգի աշխատանքում, որտեղ վճարվել են Medicare հարկեր կամ
- Դուք խնամքի տակ գտնվող ծնող եք որու զավ ակը բավականաչափ երկար աշխատել է կառավարական աշխատանքում, որտեղ վճարվել են Medicare հարկեր:

Եթե դուք չեք բավարարում այս պահանջներին, ապա դուք կարող եք ստանալ Medicare հիվանդանոցի ապահովագրությունը, վճարելով ամսական շահաբաժին: Սովորաբար, դուք կարող եք ընդգրկվել այդ հիվանդանոցի ապահովագրության մեջ միայն գրանցման նշանակված ժամանակամիջոցներում:

Ծանուցում. *Հակառակ որ կենսաթոշակի անցնելու տարիքը այլեւս 65 չէ, դուք պետք է գրանցվեք Medicare համար ձեր 65-րդ տարեդարձից երեք ամիս առաջ.*

Նախքան 65 տարեկան ըլլալը, դուք իրավասու եք անվճար ստանալու Medicare հիվանդանոցի ապահովագրություն, եթե.

- 24 ամսվա ընթացքում ստացել եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստ.
- Դուք ստանում եք հաշմանդամության կենսաթոշակ Երկաթուղու Կենսաթոշակի Խորհրդից եւ բավարարում եք որոշակի պայմանների կամ
- Դուք ունեք Լու Գեհրիգի հիվանդություն (երկրորդական ամիոտրոֆիկ սկլերոզ) կամ

- Դուք բավականաչափ երկար աշխատել եք կառավարական աշխատանքում, որտեղ վճարվել են Medicare հարկեր եւ դուք բավարարում եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության ծրագրի պահանջներին կամ
- Դուք երեխան եք կամ 50-տարեկան կամ ավելի բարձր տարիքի այրին եք (տղամարդ կամ կին), ներառյալ ամուսնալուծված այրին (տղամարդ կամ կին), մի աշխատողի որը բավականաչափ երկար աշխատել է կառավարական աշխատանքում, որտեղ վճարվում էին Medicare հարկերը եւ դուք բավարարում եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության ծրագրի պահանջներին:
- Դուք տառապում եք մշտական երիկամային ձախողությունից եւ ստանում եք արյան մաքրում (դայալիսիզ) կամ երիկամի փոխատնկում եւ
  - Դուք իրավասու եք ստանալու կամ ստանում եք ամսական նպաստներ Սոցիալական Ապահովության կամ Երկաթուղու Կենսաթոշակի Խորհուրդի կողմից կամ
  - Դուք բավականաչափ երկար աշխատել եք կառավարական աշխատանքում որտեղ վճարվել են Medicare վ արկեր
  - Դուք երեխան կամ կինն եք (ամուսինը) մի աշխատողի (ողջ թե մահացած), որը բավականաչափ երկար աշխատել է Սոցիալական Ապահովության օրէնքների համեմատ, կամ կառավարական աշխատանքում որտեղ վճարվել է Medicare վ արկեր:

Բժշկական ապահովագրություն (Մաս B)

Որեւէ անձ, որ իրավասու է անվճար Medicare հիվանդանոցի ապահովագրության (Մաս A) համար, կարող է արձանագրվ իլ Medicare բժշկական ապահովագրության (Մաս B)՝ վճարելով ամսական շահաբաժին: Հավելյալ տեղեկության համար պահանջեք *Medicare Part B Premiums: New Rules for Beneficiaries with Higher Incomes* (*Նոր Օրենքներ Medicare Մաս B Ունեցողների Համար, Որոնք Բարձր Եկամուտ Ունեն*, հրատարակության թիվ. 05-10161). Այս հրատարակությունը Հաերէն լեզվով չկա:

Եթե դուք իրավասու չեք անվճար հիվանդանոցի ապահովագրության համար, ապա դուք կարող եք գնել բժշկական ապահովագրություն՝ առանց գնելու հիվանդանոցի

ապահովագրության մասը, եթե դուք 65-տարեկան կամ ավելի տարեց եք եւ դուք

- ԱՄՆ քաղաքացի եք կամ
- Օրինական կարգով մուտք գործաց ոչ քաղաքացի եք, որը առնվազն հինգ տարի ապրել է ԱՄՆ-ում:

Medicare առավելության ծրագիրներ (Մաս C)

Եթե դուք ունեք հիվանդանոցի ապահովագրություն (Մաս A) եւ բժշկական ապահովագրություն (Մաս B) ապա դուք կարող եք արձանագրվ իլ Medicare առավելության ծրագրի: Որով հետեւ Medicare առավելության ծրագիրը հավ ասարում է Մէտիկէբի (Medigap) պայմանագրության, հնարավ որ չե նաեւ գնել Մէտիկէբի ծրագիր:

Medicare առավ ելության ծրագիրը ընդգրկում է.

- Խնամքը ստանձնող Medicare ծրագիրներ.
- Medicare նախընտրող նախախնամության կազմակերպություններ (PPO).
- Անձնական վ ճարում ընդունող նախախնամության կազմակերպություններ.
- Medicare մասնագիտական ծրագիրներ:

Եթե դուք արձանագրվ եք Medicare մի առավ ելության ծրագրի, ապա դուք օգտագործելու եք այդ ծրագրի առողջապահական քարտը, ստանալու ձեր բժշկական խնամքը : Որով հետեւ ստանում եք հավ ելյալ նպաստներ, կարող է որ դուք հավ ելյալ ամսական շահաբաժին վ ճարեք:

Անոնք որոնք նոր են իրավ ասու լինում Medicare, կարող են արձանագրվ իլ Medicare առավ ելության ծրագրի իրենց սկսպնական շրջանում կամ տարեկան համակարգվող ընտրական ժամանակաշրջանում՝ յուրաքանչյուր տարվա Նոյեմբերի 15-ից մինչեւ Դեկտեմբերի 31-ը : Նաեւ կան հատուկ արձանագրության ժամանակաշրջաններ որոշ կացությունների համար:

Medicare դեղագիրով դեղորայք գնելու ծրագիրը (Մաս D)

Անոնք որոնք ունեն հիվանդանոցի ապահովագրություն (Մաս A), բժշկական ապահովագրություն (Մաս B) կամ Medicare առավելության ծրագիրներ (Մաս C) կարող են գրանցվել

Medicare դեղագիրով դեղորայք գնելու ծրագրի (Մաս D): Այս ծրագիրը ստիպողական չե եւ ունի հավ ելյալ ամսական շահաբաժնի ծախս: Եթե դուք ներկայում արդեն ունեք այլ ապահով ագրական ծրագիր որն վ ճարում է ձեր դեղագիրով դեղորայք գնելու ծախսերը, դուք կարող եք սպասել գրանցվ ելու այս ծրագրի: Սակայն եթե դուք չունեք դեղագիրով դեղորայք գնելու այլ ապահով ագրական ծրագիր, որու ծառայությունը մեծմասամբ համապատասխանում է Մաս D-ի ծառայության, դուք տուգանք եք վ ճարելու եթե ուշ միանաք Մաս D ծրագրի: Այս տուգանքը շարունակվ ելու է մինչեւ այն ատեն որ մասնակցում եք Մաս D ծրագրի:

Անոնք որոնք նոր են իրավ ասու լինում Medicare այլ մասերի, պետք է ընդգրկվեն Մաս D ծրագրին իրենց սկզբնական նշանակման ժամանակաշրջանի ընթացքում : Սկզբնական նշանակման ժամանակաշրջանին հետեւում է տարեկան համակարգվող ընտրական ժամանակաշրջանը՝ յուրաքանչյուր տարվա Նոյեմբերի 15-ից մինչեւ Դեկտեմբերի 31-ը՝ երբ կարող եք արձանագրվ իլ կամ ապահովագրական կազմակերպության փոփոխություններկատարել: Առանձին իրավիճակների համար կան նաեւ ընդգրկման հատուկ ժամանակաշրջաններ:

Օգնություն ցած եկամուտ ունեցող մարդկանց համար

Եթե դուք չեք կարող վճարել ձեր Medicare ապահովագրական շահաբաժինը եւ բժշկական այլ ծախսերը, ապա դուք կարող եք ստանալ օգնություն ձեր նահանգից: Յուրաքանչիւր նահանգ մատուցում է ծրագրեր այն մարդկանց համար որոնք ունեն Medicare եւ ցած եկամուտ: Այս ծրագրերը կարող են վճարել Medicare շահաբաժնի մի մասը կամ ամբողջությամբ եւ կարող են նաեւ վճարել Medicare զեղջումները եւ համա-ապահովագրությունը: Ծրագրի պահանջներին բավարարելու համար դուք պետք է ունենաք Մաս A-ն (հիվանդանոցի ապահովագրություն) եւ սահմանափակ եկամուտ: Նահանգների մեծամասնությունը պահանջում է որ ձեր դրամական միջոցները, օրինակ՝ դրամատան հաշիվները, բաժնետոմսերը եւ երաշխավ որագիրները չգերազանցեն 4.000 ԱՄՆ դոլարը՝ միայնակ մարդու համար եւ 6.000 ԱՄՆ դոլարը՝ զույգի համար:

Եթե դուք վ ստահ չեք որ ունեք Մաս A-ն, ապա նայեք ձեր Medicare կարմիր, սպիտակ եւ կապույտ քարտերին: Այնտեղ

քարտի ներքեւի ձախ անկյունում կտեսնեք «Հիվանդանոց (Մաս A)»: Եթե այնուամենայնիվ համոզված չեք, ապա դուք կարող եք զանգահարել Սոցիալական Ապահովության անվճար հեռախոսահամարով:

Դուք կարող եք նաեւ այցելել Medicare կայք էջը (ինտրնետում) հավելյալ տեղեկություն ստանալու համար: Այցելեք ***www.medicare.gov*** եւ պահանջեք *If you need help paying Medicare costs, there are programs that can help you save money* (*Ծրագիրներ Կան Որոնցից Կարող Եք Ոգտվել Եթե Օգնության Պետք Ունեք Medicare Ծախսերը Վճարելու*, Հրապարակում թիվ CMS-10126)

Դուք նաեւ կարող եք ստանալ հավ ելյալ օգնություն վճարելու Medicare դեղագիրով դեղորայք գնելու ծրագրի հետ (Մաս D) կապվ ած ծախսերը, օրինակ՝ տարեկան զեղջումները, ամսական շահաբաժինը եւ դեղատոմսերի համա-վճարումները: Դուք կարող եք իրավասու լինել այս հավելյալ օգնության համար, եթե դուք ունենք սահմանափակ եկամուտ (կապված աղքատության դաշնային մակարդակի հետ) եւ սահմանափակ դրամական միջոցներ: Այդ եկամուտների եւ դրամական միջոցների սահմանափակումները փոփոխվում են ամեն տարի: Դուք կարող եք դիմել մեզ այս տարվ ա սահմանները իմանալու համար:

Եթե դուք ունեք Medicare եւ Մէտիքէլ (որն վ ճարում է ձեր դեղագիրով դեղորայք գնելու ծախսերը), Medicare եւ Սոցիալական Լրացուցիչ Եկամուտ («SSI»), կամ եթե ձեր նահանգը վճարում է ձեր Medicare շահաբաժինը, ապա դուք ինքնաբերաբար կստանաք այս հավելյալ օգնությունը եւ դուք կարիք չունեք դիմելու:

Հավ ելյալ տեղեկություն ստանալու համար այս օգնության ծրագրի մասին կամ դիմումնագիր ներկայացնելու համար հեռաձայնեցեք Սոցիալական Ապահով ության Վարչության: Դուք նաեւ կարող եք դիմել այս օգնության մեր կայքէջում:

Ես ե՞րբ պետք է դիմեմ

Եթե դուք արդեն ստանում եք Սոցիալական Ապահովության կենսաթոշակ, հաշմանդամության նպաստներ կամ երկաթգծի կենսաթոշակային վճարումներ, մենք ձեզ հետ կապ հաստատում ենք իրավ ասու չլինելուց մի քանի ամիսներ առաջ: Դուք ինքնաբերաբար կարձանագրվ եք Medicare Մաս A-ում եւ Մաս B-ում: Սակայն, դուք իրավ ունք ունեք Մաս B-ին մերժելու որով հետեւ դուք պետք է շահաբաժին վճարեք նրա համար:

Եթե դուք չեք ստանում կենսաթոշակի նպաստներ, ապա ձեր 65-րդ տարեդարձից մոտ երեք ամիս առաջ դուք պետք է դիմեք մեզ Medicareում գրանցվելու համար: Դուք կարող եք գրանցվել Medicare նույնիսկ եթե դուք մտադիր չեք կենսաթոշակի անցնել 65-տարեկանում:

Medicareում գրանցվելուց հետո դուք կստանաք Medicare կարմիր, սպիտակ եւ կապույտ քարտը, որու վ ըայ գրվ ած կը լինի թե դուք ունեք Մաս A-ն, Մաս B-ն կամ երկուսն էլ: Պահե՛ք ձեր քարտը ապահով տեղում, որպեսզի ունենաք այն անհրաժեշտության դեպքում: Եթե ձեր քարտը կորավի կամ գողացվի, դուք կարող եք դիմել փոխարինող քարտի համար ուսուայնէջի ***www.socialsecurity.gov*** կայքում կամ զանգահարելով Սոցիալական Ապահովության անվճար հեռախոսահամարով: Դուք նաեւ կստանաք *Medicare եւ Դուք* (*Medicare & You*) հրատարակությունը (հրատարակության թիվ CMS-10050), որտեղ նկարագրված են ձեր Medicare նպաստները եւ Medicare ծրագիրներու ընտրությունները:

Արձանագրության հատուկ կացություններ

Դուք նաեւ պետք է կապ հաստատեք Սոցիալական Ապահովության հետ Medicare դիմելու համար, եթե.

- Դուք 50-ից 65-տարեկան հաշմանդամ այրի կին կամ այրի տղամարդ եք, սակայն չեք դիմել հաշմանդամության նպաստների համար, որով հետեւ դուք արդեն ստանում եք Սոցիալական Ապահովության այլ տեսակի նպաստ.
- Դուք կառավարական աշխատող եք եւ հաշմանդամ եղել եք 65 տարիքից առաջ.

- Դուք, ձեր ամուսինը (կինը) կամ ձեր խնամքի տակ գտնվող երեխան ունի երիկամունքի մշտական ձախողություն.
- Դուք նախկինում ունեիք Medicare բժշկական ապահովագրություն, սակայն ժամանակ մը ետք հրաժարվ ել եք նրանից կամ
- Դուք նախկինում մերժել էիք Medicare բժշկական ապահովագրության բաժինը, երբ իրավ ասու եղել էիք հիվանդանոցիապահովագրության (Մաս A)-ի համար:

Մաս B-ի արձանագրության սկզբնական ժամանակաշրջանը

Երբ դուք առաջին անգամ իրավասու եք դառնում հիվանդանոցի ապահովագրության համար (Մաս A), ապա դուք ունեք եօթ ամսյա ժամանակաշրջան (ձեր արձանագրության սկզբնական ժամանակամիջոցը), որի ընթացքում պետք է գրանցվեք բժշկական ապահովագրության (Մաս B) համար: Երբ ուշ արձանագրվ եք, ձեր վ ճարելիք շահաբաժինը ավ ելի բարձր կլինի ինչպես նաեւ կը յետաձգվ են Medicare ծառայությունները: Եթե դուք իրավասու եք 65-տարեկանում, ապա ձեր արձանագրության սկզբնական ժամանակաշրջանը սկսվում է ձեր 65-րդ տարեդարձից երեք ամիս առաջ, ներառնում է ձեր 65 տարեկանը լրանալու ամիսը եւ ավարտվում է 65-րդ տարեդարձից երեք ամիս հետո: Եթե դուք իրավասու եք Medicare համար հաշմանդամության կամ երիկամունքի մշտական ձախողության պատճառով, ապա ձեր արձանագրության սկզբնական ժամանակաշրջանը կախված է ձեր հաշմանդամությունը կամ բուժումը սկսելու ժամկետից:

Մաս B-ն ե՞րբ ի զորու կը լինի

Եթե դուք Medicare Մաս B-ում ինքնաբերական գրանցումը ընդունում եք, կամ երբ դուք արձանագրվ ում եք Medicare Մաս B- ում ձեր արձանագրության սկզբնական ժամանակաշրջանի առաջին երեք ամսվա ընթացքում, ապա ձեր բժշկական ապահովագրության լիազորությունը սկսում է ձեր իրավասու դառնալու առաջին ամսից : Եթե դուք արձանագրվ ում եք վերջին չորս ամսվա ընթացքում, ապա ձեր պաշտպանությունը սկսում է ձեր ընդգրկվելուց հետո մեկից մինչեւ երեք ամիսների ընթացքում:

Հետեւյալ աղյուսակը ցույց է տալիս թե երբ Medicare Մաս B-ն ի զորու կը լինի

Եթե դուք ընդգրկվում եք ձեր սկզբնական ընդգրկման ժամանակաշրջանի տվյալ ամսում.	Ապա ձեր Medicare Մաս B-ին ի զորու կը լինի.
1	Այն ամսից, երբ դուք իրավասու եք դառնում Medicare համար
2	Այն ամսից, երբ դուք իրավասու եք դառնում Medicare համար
3	Այն ամսից, երբ դուք իրավասու եք դառնում Medicare համար
4	Ընդգրկվելուց մեկ ամիս հետո
5	Ընդգրկվելուց երկու ամիս հետո
6	Ընդգրկվելուց երեք ամիս հետո
7	Ընդգրկվելուց չորս ամիս հետո

Մաս B-ի արձանագրության ընդհանուր ժամանակաշրջանը

Եթե դուք չեք արձանագրվ ում Medicare Մաս B-ում ձեր ընդգրկման սկզբնական ժամանակաշրջանում, ապա դուք ունեք հնարավորություն գրանցվելու «արձանագրության ընդհանուր ժամանակամիջոց»-ում որն է Յունուարի 1-ից մինչեւ Մարտի 31-ը: Մաս B-ն ի զորու կլինի հաջորդ Յուլիս ամսից: **Այնուամենայնիվ, ձեր ամսական շահաբաժինը ավելանում է 10 տոկոսով յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակաշրջանի համար որ դուք չեք ընդգրկվել Medicare Մաս B-ում հակառակ որ իրավասու էիք:**

Հատուկ արձանագրության ժամանակաշրջան այն անհատների համար որոնք պատկանում են խմբային ապահով ագրական ծրագրի աշխատանքի միջոցով

Եթե դուք 65-տարեկան կամ ավելի տարեց եք եւ մասնակցում եք խմբային առողջապահական ծրագրի՝ ձեր կամ ձեր

ամուսնու (կնոջ) **ընթացիկ աշխատավայրում**, ապա դուք ունեք «արձանագրության հատուկ ժամանակամիջոց», որի ընթացքում կարող եք գրանցվել Medicare Մաս B-ում: Դա նշանակում է, որ դուք կարող եք հետաձգել ընդգրկումը Medicare Մաս B-ում առանց ընդհանուր արձանագրության ժամանակաշրջանին սպասելու անհրաժեշտության եւ չվճարել 10-տոկոսյան հավելյալ շահաբաժին ուշ ընդգրկման համար: Կանոնները ձեզ թույլ են տալիս որ դուք

- Արձանագրվ եք Medicare Մաս B-ում որեւէ ժամանակ, երբ դուք տակաւին մասնակցում եք մի խմբային ապահով ագրական ծրագրի ընթացիկ աշխատանքի միջոզով : Կամ
- Արձանագրվ եք Medicare Մաս B-ում աշխատանքից դուրս գալուց կամ ձեր խմբային ապահով ագրական ծրագրի ավ արտումից վ երջ ութ-ամսյա ժամանակաշրջանում, որն որ ավ ելի շուտ պատահում է:

Արձանագրության հատուկ ժամանակաշրջանի կանոնները ի զորու չեն, եթե աշխատանքը կամ գործատուի կողմից տրամադրված խմբային առողջապահության ծրագիրը ավարտվում է ձեր ընդգրկման սկզբնական ժամանակաշրջանի ընթացքում:

Եթե դուք չընդգրկվեք ութ ամսվ ա ժամանակաշրջանի միջոցին, ապա դուք պետք է սպասեք մինչեւ մյուս ընդգրկման ընդհանուր ժամանակաշրջանը, որը սկսվում է հաջորդ տարվա Յունուարի 1-ին: Դուք նաեւ կարող եք վճարել ավելի բարձր շահաբաժին՝ ինչպես նկարագրված է Մաս B-ի արձանագրության ընդհանուր ժամանակաշրջանը բաժնի մեջ:

Անոնք որոնք ստանում են հաշմանդամության նպաստներ Սոցիալական Ապահով ության Վարչությունից եւ ունեն խմբային այլ ապահով ագրություն (իրենց կամ իրենց ընտանիքի այլ անդամի ընթացիկ աշխատանգի միջոցով) ունեն նոյն «արձանագրության հատուկ ժամանակամիջոց»ը եւ շահաբաժնի տուգանքից պաշտպանություն ինչպես նրանք որոնք 65 տարիքից ավ ել են:

Առողջապահական ծառայություններ ստանալու ընտրություն

Medicare նպաստառուները ունեն առողջապահական ծառայություններ ստանալու ընտրություններ:

Ձեր առողջապահական խմանքի տարբեր հնարավորությունների մասին հավ ելյալ տեղեկություն ստանալու համար կարդացեք հետեւյալ հրատարակությունները.

- *Medicare եւ Դուք* (*Medicare & You*) (հրատարակության թիվ CMS-10050) — Այս ընդհանուր ուղեցույցը ուղարկվում է անոնց որոնք նոր գրանցվ ում են Medicare եւ այնուհետեւ ամեն տարի ուղարկվում է նորացված օրինակը:
- *Ընտրել Մէտիկէյթի Պայմանագրություն. Առողջության Ապահով ագրության Ուղեցույց Մարդկանց Համար Որոնք Medicare Ունեն* (*Choosing a Medigap Policy: A Guide to Health Insurance For People With Medicare*) (հրատարակության թիվ CMS-02110) — Այս ուղեցույցում նկարագրված են այլ ապահովագրական ծրագիրներ որոնք ամբողջացնում են Medicare: Այս հրատարակությունը նաեւ ուղղություն է տալիս հարմար պայմանագրությունների մասին:

Այս հրապարակումների օրինակները ստանալու համար խնդրվում է զանգահարել Medicare՝ անվճար հեռախոսահամարով՝ **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**) կամ այցելել ***www.medicare.gov*** կայքը: Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա կարող եք զանգահարել՝ **1-877-486-2048** TTY հեռախոսահամարով.

Եթե դուք ունեք առողջության ուրիշ ապահովագրություն

Medicare հիվանդանոցային ապահովագրությունը անվճար է գրեթե բոլորի համար, բայց դուք վճարում եք ամսական շահաբաժին բժշկական ապահովագրության համար: Եթե դուք արդեն ունեք առողջության ուրիշ ապահովագրություն Medicare իրավ ասու դառնալու ատեն, ե դուք պետք է որոշեք եթե Medicare բժշկական ապահով ագրության համար կարժէ կրկնակի վ ճարել:

Պատասխանը տարբեր է յուրաքանչյուր անձի պարագայում եւ ձեր ունեցած առողջության ապահովագրությունից: Մենք չենք

կարող ձեզ տալ «այո» կամ «ոչ» պատասխանները, բայց կարող ենք ձեզ խրատել որպեսզի դուք որոշում կայացնելք:

Եթե դուք ունեք անձնական ապահովագրության ծրագիր

Կապ հաստատեք ձեր ապահովագրական գործակալի հետ, որպեսզի ճշտեք, թե որքանով է ձեր անձնական ծրագիրը համապատասխանում Medicare բժշկական ապահովագրության հետ:

Սա մասնավորապես կարեւոր է եթե դուք ունեք ընտանիքի անդամներ, որոնք ընդգրկված են նույն պայմանագրությամբ: Հիշեք որ Medicare չընդգրկում բոլոր առողջապահական ծառայությունները ինչպես չեն ընդգրկում անձնական ծրագիրների մեծամասնությունը: Երբ ընտրում եք ձեր առողջության ապահով ագրական ծրագիրը, նկատի ունեցեք, որ ծերերու տան (nursing home) խնամքների ծախսերի մեծամասնությունը չեն ընդգրկվում Medicare կամ անձնական ապահովագրությունների ծրագիրներում: Զգուշացման մեկ կարեւոր խոսք՝ մի՛ հրաժարվեք ներկայումս ունեցած որեւէ առողջության ապահովագրությունից, **մինչեւ ձեր Medicare ապահով ագրությունը ի զորու լինի:**

Եթե դուք ունեք ապահովագրություն գործատուի կողմից տրամադրված խմբային առողջապահական ծրագիր

Գործատերեր, որոնք մատուցում են խմբային առողջապահական ծրագիրներ 20 կամ ավելի աշխատողների, օրենքով ստիպվ ած են մատուցանել նույն նպաստները 65 տարեկան (կամ ավելի) աշխատողներին եւ իրենց ամուսիններին (կանանց) ինչպես տրամադրում են երիտասարդ աշխատողներին:

Եթե դուք ներկայում մասնակցում եք գործատուի կողմից տրամադրված խմբային առողջապահական ժրագրի, ապա նախքան Medicare բժշկական ապահովագրության համար գրանցվելը դուք պետք է խոսեք ձեր պաշտօնյաների բաժնի (personnel) վ արիչի հետ:

Եթե դուք ունեք առողջապահական պաշտպանության այլ ծրագիրներ

Եթե դուք ընդգրկված եք Պաշտպանության Նախարարության կողմից մատուցանվ ած ծրագրով, ապա ձեր առողջապահական նպաստները կարող են փոխվել կամ ավարտվել երբ դուք իրավաու դառնաք Medicare համար: Տեղեկության համար դուք պետք է դիմեք Պաշտպանության Նախարարության կամ զինվորական առողջապահական նպաստների խորհրդականին՝ նախքան Medicare բժշկական ապահովագրության մեջ ընդգրկվելու մասին ձեր որոշումը կայացնելը: Եթե դուք ունեք առողջապահական պաշպանություն Հնդկական Առողջապահական Ծառայությունից, Վետերանների Վարչությունից կամ նահանգային բժշկական օգնության ծրագրից, ապա դիմե՛ք այնտեղ աշխատող մարդկանց, խնդրելովոր որ ձեզ օգնեն որոշելու, թե արդյոք ձեզ համար նպաստավ որ է Medicare բժշկական ապահովագրություն ունենալը:

Եթե ուզում եք լրացուցիչ տեղեկություն հասկնալու թե առողջապահական այլ ապահովագրական ծրագիրները ինչպես գործում են Medicare հետ, զանգահարե՛ք Medicare անվճար հեռախոսահամարով՝ **1-800-MEDICARE** (1-**800-633-4227**) եւ պահանջեցեք Medicare եւ Այլ Առողջապահական Նպաստներ. *Ձեր Ուղեցույցը Թե Ով Է Վճարում Առաջ* (*Medicare and Other Health Benefits: Your Guide To Who Pays First*) հրատարակությունը (հրատարակության թիվ CMS-02179) կամ այցելե՛ք ***www.medicare.gov*** կայքը: Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն ապա դուք կարող եք զանգահարել հատուկ TTY հեռախոսահամարով՝ **1-877-486-2048**:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10043-AM
Medicare (Armenian)
May 2008